NATIONAL ASSESSMENT FRAMEWORK FOR LANGUAGES AT SENIOR SECONDARY LEVEL

PUBLIC EXAMINATION

# 2001 ARMENIAN

| STUDENT / REGISTRATION NUMBER | | | | | | | | | | | PAGES: 12 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

CENTRE NUMBER

STATE / TERRITORY

## EXTENDED LEVEL

## PAPER 2: PART A—WRITING IN ARMENIAN
## PART B—REORGANISING WRITTEN INFORMATION

**Tuesday 23 October**

**Time: 1 hour and 30 minutes**

*Approved English–Armenian/Armenian–English dictionaries or monolingual dictionaries may be used.*

**Instructions to Candidates**

1. Write all your responses to the tasks in Paper 2 in this booklet in ink or ball-point pen. Space is provided for you to make notes.
2. You are required to respond to both Part A and Part B.
3. Make sure that you write your Student/Registration Number, the State or Territory in which the examination is taken, and the Centre Number (if required) on the front cover of this booklet.
4. All question booklets will be collected at the end of the examination.
5. The assessment criteria for this paper are printed on the back page of this booklet.

*This examination is used for the WACE (Western Australia), the HSC (New South Wales), the TCE (Tasmania), the SACE (South Australia), the NTCE (Northern Territory), the Senior Certificate (Queensland), and the VCE (Victoria).*



© Board of Studies NSW 2001

## Part A—Writing in Armenian

Հետեւեալ հարցումներէն մէկը ընտրէ՛ և հայերէնով պատասխանէ՛ 150–200 բառով:

*Choose ONE of the following tasks and write approximately 150–200 words in Armenian.*

1. «Առողջապահական Շաբաթ» կը նշուի ձեր նահանգին մէջ: Քեզմէ խնդրուած է գրել յօդուած մը դպրոցի թերթի համար նիւթ ունենալով, «Առողջ միտք առողջ մարմնի մէջ»:

   Ներկայացո՛ւր յօդուածդ:

կամ / *OR*

2. Շրջանի երիտասարդական միութիւնը կազմակերպած է մի հանդիպում որտեղ արծարծուելու է «Երիտասարդը եւ թմրեցուցիչը՝ Ի՞նչ կարող ենք անել մենք»:

   Որպէս ներկայացուցիչ այդ միութեան քեզանից պահանջուել է ներկայացնել օրուայ բացման խօսքը:
   Գրի՛ր խօսքիդ բնագիրը (text):

կամ / *OR*

3. Վերջերս, շաբաթավերջդ անցուցիր մտերիմ ընկեր/ընկերուհիիդ հետ:
   Գրէ՛ օրագիրդ անդրադառնալով՝ մտերիմ ընկեր ունենալու կարեւորութիւնը:

կամ / *OR*

4. Վերջերս մեծ ցուցատախտակի վրայ դպրոցի դիմաց դրուած է վնասակար ուտեստեղէնների ծանուցումներ։

Դու այն գաղափարի ես, որ ծանուցումները անյարմար են դպրոցական տարիքի պատանիների համար։

Գրի՛ր մի նամակ շրջանի թերթի խմբագրին, որտեղ յայտնում ես քո մտահոգութիւնները։

**Նշումներ** / ***Notes***

Հարցում թիվ | *Task Number:*

## Part B—Reorganising Written Information

Օգտուելով միայն տրուած երեք տեղեկութիւններից, գրի՛ր մի յօդուած դպրոցի թերթի համար, ուր կը քննարկես «Ծնողք- զաւակ փոխ յարաբերութիւնները»:

Գրի՛ր 120–150 բառ հայերէնով:

*Using only information from the three texts provided, write an article for your school magazine in which you examine parent–child relationships. Write 120–150 words in Armenian.*

**Նշումներ** / ***Notes***

*TEXT 1*

Շաբաթ, 19 Մայիս, 2001,

Սիրելի՛ Օրագիրս,

Ծնողքս մի՛ միայն սպասումներ ունի ինձանից, սպասում են ես լինեմ տիպար, մաքուր նկարագրով հայ: Ձանձրացել եմ իրենց խրատներից, ուզում են լինեմ հնազանդ, քաղաքավար, պարտաճանաչ եւ պատասխանատու բոլոր գործերումս:

Յոգնել եմ իրենց տրտունջներից: Չեն հասկանում ինձ, արգիլում են գիշերները մնալ ընկերուհիիս տունը:

Սպասում են որ իրենց որոշած ժամին տուն վերադառնամ: Արգիլում են գնամ դիսքօ:

Չես կարող երեւակայել ջղայնութիւնս: Չափազանց պաշտպանողական են եւ ստիպում են որ հայկական դպրոց գնամ:

Բաւական է՝ Աստուած իմ, շարունակ հայկականութիւն ու հայ ազգ....

Ի՞նչպէս կարելի է հասկացնել իրենց...

*TEXT 2*

Ծնողքի մը նամակը խմբագրութեան......

Յարգելի՛ խմբագրութիւն,

Արդեօ՞ք չարունակենք մեղադրել մեր զաւակները իրենց ամբողջ թերութիւններուն համար.....

Կը կարծեմ ո՛չ, եթէ ծնողք հարց տանք մենք մեզի:

ա- Օրուան ընթացքին քանի՞ ժամ կը տրամադրենք լսելու եւ հաղորդակից դառնալու մեր զաւակներուն:

բ- Անդրադառնալով թէ կ'ապրինք տարբեր դարու մէջ, հնարաւո՞ր է չարունակել մեր խստապահանջ կեցուածքը հանդէպ մեր զաւակներուն:

գ- Ի՞նչքանով մենք օրինակ ենք իրենց, մեր գործունէութեամբ:

դ- Ի՞նչքանով կը զօրակցինք իրենց ցանկութիւնները իրականացնելու:

ե- Արդեօ՞ք կը գիտակցինք թէ, որքանով մենք մեր կարգին տուած ենք նոյն մտահոգութիւնները մեր ծնողքին:

Կ՛առաջարկեմ փոխանակ անընդհատ քննադատելու մեր զաւակները, եկէք որդեգրենք դրական կեցուածք մը, անդրադառնալով վերոյիշեալ կարեւոր կէտերը:

Վստահ, որ արդիւնքը պիտի ըլլայ անսպասելիօրէն դրական:

Յարգանօք,
Ծնողք մը

*TEXT 3*

# ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

ՄԱՍՐՈՊ-ՄԱՇՏՈՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ

ՆԻՒԹ

## ԾՆՈՂՔ-ՈՒՍՈՒՑԻՉ-ԱՇԱԿԵՐՏ

## ՓՈԽ-ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

ԴԱՍԱԽՕՍ

## ՃԷՅՄՍ - ՌԱՍԸԼ

Վայր

ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Շաբաթ, 19 Մայիս, 2001 ժամը 7:30 ին

Ծանօթ,

- Երբե՞ք մօտէն հետեւած էք ձեր զաւկի առօրեայ դասերուն:
- Ինչքանո՞վ տեղեակ էք ձեր զաւկի առօրեայ կեանքին:
- Փոխադարձ վստահութիւն ծնողք-զաւակ, ուսուցիչ-աշակերտի միջեւ:
- Ծնողք-ուսուցիչ յարաբերութիւն եւ հաղորդակցութիւն:
- Անվերապահ ժամանակ տրամադրել զաւկի առօրեայ աշխատանքներուն, տան պարտականութիւններուն:
- Ընտանեկան մթնոլորտի ազդեցութիւնը աշակերտի վրայ:

Մեսրոպ Մաշտոց Վարժարանի,
Տնօրէնութիւն

# 2001 ARMENIAN

## PAPER 2: PART A—WRITING IN ARMENIAN
## PART B—REORGANISING WRITTEN INFORMATION

---

### PART A—ASSESSMENT CRITERIA

- The capacity to deal with the chosen topic
  - † *Breadth of treatment*
  - † *Suitability of the writing for the topic and/or purpose*
  - † *Maintenance of reader's interest*
- Form and organisation
  - † *Observation of the conventions of the discourse form (style, sequencing, cultural appropriateness) and specifications regarding length*
  - † *Organisation of content*
- Clarity of expression
  - † *Control of the language required by the topics including accuracy in the use of linguistic elements*
- Variety and appropriateness of vocabulary and sentence structuring
  - † *Range of vocabulary*
  - † *Variety in sentence structure*
  - † *Appropriateness of vocabulary and sentence structure*

---

### PART B—ASSESSMENT CRITERIA

- † *The capacity to select and use relevant information*
- Form and organisation
  - † *Observation of the conventions of the discourse form (format, style, cultural appropriateness)*
  - † *Linking of related ideas*
  - † *Organisation of information from sources into a meaningful sequence*
- Effective expression
  - † *Control of the language required to complete the task (appropriateness, clarity of expression including accuracy in the use of linguistic elements)*
  - † *Degree of independence from the wording of the original information*